

ПРОБЛЕМА ВЫКИДЫША И УБИЙСТВА НОВОРОЖДЕННОГО РЕБЕНКА В "ЧАСТОПОВТОРЯЕМЫХ РЕЧАХ"

С. А. ХАЧАТРЯН

В статье доказывається, что норма об искусственном выкидыше и убийстве новорожденного ребенка, нашедшая место в "Частоповторяемых речах", а затем и в других источниках познания древнеармянского права, по сути, взята не из Библии. Эту норму, как и многие другие, Григор Просветитель привнес в армянское христианское право из зороастрийского права, тем самым обеспечив связь и преемственность двух армянских правовых систем и цивилизаций.

THE ISSUE OF MISCARRIAGE AND KILLING OF A NEW-BORN IN "SPEECHES"

S. A. KHACHATRYAN

It is proved in the article that in "Speeches" the prohibiting norm about miscarriage by applying artificial means or killing of a new-born is essentially not Biblical. Gregory the Illuminator borrowed that and many other norms from the Zoroastrian Law and inserted them into the Christian Law which led to the continuation of civilizations and the hereditary relation of the Armenian Zoroastrian and Christian Law systems.

ՔԱՐԶ ՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ, ԿԱՆԽՄԱՆ ՈՒ ՆԱԽԱԿԱՆԽՄԱՆ ՄԻՋՈՑ ԵՎ ՊԱՏԺԱՏԵՍԱԿ

Ս. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

*Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Քարշ տալը կամ քարշելը որպես հանցագործությունների ու խախտումների բացահայտման մեթոդ, միջոց և պատժատեսակ՝ գոյություն է ունեցել միայն զրադաշտական իրավունքում, որից էլ անցել է հայկական քրիստոնեական իրավունքին: Սակայն դրա՝ որպես զրադաշտական դեղիկտային իրավունքի դրսևորման մասին որևէ անդրադարձ չկա ավեստագիտական կամ իրավագիտական գրականության մեջ: Անգամ Ա. Փերիխանյանը, որն իր «Իրանի հասարակությունը և իրավունքը Պարթևական և Սասանյան փուլերում» աշխատության մեջ զրադաշտական դեղիկտային իրավունքին նվիրել է հատուկ բաժին, ընդհանրապես ուշադրություն չի դարձնում ոչ քարշելուն, ոչ կապելուն, ոչ էլ հին հայկական պատմական աղբյուրներում արտացոլված այլ զրադաշտական պատժատեսակներին ու ներգործության ձևերին¹: Քարշելը սխալ է թարգմանված «Հայ-ռուսերեն բառարանում»²:

¹ Տե՛ս *Периханян А. Г.* Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды. М., 1983, էջ 247-262:

² Տե՛ս Հայ-ռուսերեն բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ իրատ., 1987, էջ 705, 709:

Դրա մասին խորհրդավոր հիշատակումներ կան, նախ, «Հաճախապատում ճառքի» «Թ» ճառի 32, «ԻԳ» ճառի 96, 107 տներում: Սակայն, նախքան քարշելու մասին դրանցում առկա հիշատակումների քննարկմանն ու մեկնաբանմանն անցնելը, պետք է այդ վերջին ճառի մասին որոշ պարզաբանումներ տալ և հիմնավորել, որ այն գրել է հենց ինքը՝ Մեծն Գրիգոր Լուսավորիչը:

Այդ ճառն իրենից ներկայացնում է վանական կանոնադրության ազատ շարադրանք: Ի տարբերություն այդ ժամանակներում Եգիպտոսում Պախոմիոսի կողմից ստեղծված վանական կանոնադրության, որը, ըստ էության, եղել է աշխատանքային կանոնադրություն և միասին ճգնող վանականներին պարտավորեցրել զբաղվել ֆիզիկական աշխատանքով, զանազան արհեստներով³, նշված վանական կանոնադրությունը աշխարհում առաջինն է, որը վանականներին պարտավորեցրել է զբաղվել մտավոր աշխատանքով: Եվ դրա վկայությունը ոչ միայն այս և այլ ճառերն են՝ առարկայացած «Հաճախապատում ճառքում», այլև Ագաթանգեղոսի վկայությունները քրիստոնեական հեղափոխության ընթացքում Գր. Լուսավորչի կողմից վանքերի ստեղծման ու դրանց գործունեության բնույթի մասին: Նա գրում է, որ Գր. Լուսավորիչը Մեծ Հայաստանում հիմնել է վանքեր, որոնցում զբաղվել են «Հոգևոր երգերով», «վարժվել հոգեպատում գրքերի քաղցրուսույց ընթերցանությամբ» և այլն⁴: Եվ Գր. Լուսավորիչն է եղել Հայաստանում և Փոքր Ասիայում գիտությամբ, գրականությամբ, եկեղեցական երգեցողությամբ, մանկավարժությամբ ու երեխաների ընդհանուր կրթությամբ զբաղվող առաջին վանքերի, ընդհանրապես՝ վանքերի ու դրանց գիտական կանոնադրության ստեղծողը, և ոչ թե Բարսեղ Մեծը (Կեսարացին): Վերջինիս վանական կանոնադրությունը⁵ ստեղծվել է Գր. Լուսավորչի կանոնադրության հիման վրա և ոչ թե հակառակը: Նման պնդումը հնարավոր է դարձել անհիմն կերպով դրանք Մեսրոպ Մաշտոցին վերագրելու և դրանց ստեղծման ժամկետը ավելի քան 100 տարի դեպի նոր ժամանակներ արհեստականորեն «տեղաշարժելու» պատճառով: Դա արվել է՝ հենվելով Կորյունի կցկտուր տեղեկությունների վրա՝ արտագրված Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» գրքից, որոնցում «շատ ու անհամար» վանքերի շինությունը վերագրված է Մաշտոցին⁶: Ճիշտ է, նա Մաշտոցի կողմից վանքերի կանոնադրություն գրելու մասին չի հիշատակում, բայց դա ոչինչ չի փոխում:

Մ. Մաշտոցի գործունեության ժամանակաշրջանում նման ճառ գրելու, նման կանոնադրություն ստեղծելու կամ այն Բարսեղ Կեսարացու ճառերից նմանակելու կարիք չկար: Նախ՝ այն պատճառով, որ Մաշտոցի ժամանակ մասայաբար

³ Տե՛ս *August Schuchert. Heinz Schütte. Die Kirche in Geschichte und Gegenwart. Verlag des Borromäusvereins Bonn, Kempen-Niederrhein 1969, S. 118-122; Карев А. В., Сомов К. В. История Христианства. // Журнал «Братский Вестник», 1967, N 1-6, 1968, N 1-6:*

⁴ Տե՛ս *Ագաթանգեղոս*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 470-477:

⁵ Տե՛ս *Василий Великий. Подвижнические уставы. // Василий Великий. Произведения в двух томах. Перевод Московской духовной академии, типография Сойкина, СПб, 1911, 2-ой том, էջ 480-530:*

⁶ Տե՛ս *Կորյուն*, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմանությունը ներածական ուսումնասիրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով՝ Մ. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 66-67, 121:

հայերեն էին թարգմանվում տիեզերական եկեղեցու բոլոր նշանավոր ներկայացուցիչների երկերը և կարող էր Բարսեղ Մեծի կանոնադրությունն էլ թարգմանվել: Բացի այդ, վերջինիս կազմած կանոնադրությունը անհամեմատ ընդարձակ, իրավաբանական ակտի նմանությամբ ու դրա ձևերի պահպանմամբ կազմված կատարյալ փաստաթուղթ է, իր ժամանակ ընդօրինակված Գր. Լուսավորչի ճառերից, և եթե Մաշտոցն իր հերթին նրան նմանակեր, ապա կնմանակեր նաև դրա կատարյալ ձևերը և ձևակերպումները, այնինչ դրանք այստեղ բացակայում են: Բացի դրանից, եթե «ԻԳ» ճառում տեղ գտած կանոնադրությունը դիտվում է Բարսեղ Մեծի կանոնադրության հիման վրա կազմված, ապա դրա, ինչպես նաև բոլոր այլ ճառերի, գիտական-գաղափարախոսական, իրավաբանական, կրոնական և քաղաքակրթական նշանակությունն ընդհանրապես վերանում է, դրանք որակազրկվում և իմաստազրկվում են: Գր. Լուսավորչի ճառերին նման վերաբերմունքը դարձել է նաև այն բանի պատճառ, որ իր նշանակությամբ ամենակարևոր այդ աշխատությունը Արևմտյան եկեղեցու հայրերի և ուսումնասիրողների ուշադրությանը ընդհանրապես չի արժանացել, և դա այն դեպքում, երբ այն իր նշանակությամբ քրիստոնեության պատմության մեջ ամենակարևոր ու նշանակալից փաստաթուղթն է՝ Նոր Կտակարանից հետո: Այդ ամենով մեծ հարված է հասցվել հայկական մշակույթին, քաղաքակրթությանը, այն անհամեմատ աղքատացվել է, իսկ հայոց պատմությունը՝ աղավաղվել: Դրա հետևանքով հայ ժողովուրդը քաղաքակրթություն, կուլտուրա, քրիստոնեական հեղափոխություն «արտահանող» և տարածող երկրից վերածվել է «ներմուծող»:

Մ. Մաշտոցը այդ ճառերի, մասնավորապես՝ «ԻԳ» ճառի, հեղինակը չէ և չէր կարող լինել: Դա մեր կողմից ապացուցվել է հետևողականորեն⁷: Եկեղեցական հիերարխիայում նա որևէ պաշտոն չի զբաղեցրել, եղել է կուսակրոն, վանքեր ստեղծելու լիազորություններ ու միջոցներ չի ունեցել: Բացի դրանից, նման կանոնադրություն ստեղծելու պատվեր նա չի ստացել, իսկ նրա ժամանակ այն գրելու կարիք չկար: Եթե կային վանքեր, ապա կար նաև նրանց կանոնադրությունը, և վանքերը, որոնք նրա ժամանակ արդեն հարյուր տարուց էլ ավել գոյություն ունեին, չէին կարող այդքան տարի գործել առանց կանոնադրության: Եվ եթե Պապ թագավորը դրանց գործունեությունը ժամանակին դադարեցրել էր, ապա դա չի նշանակում, որ դրանք վերացած են եղել ընդհանրապես: Նրանք տեղից տեղ են տեղափոխվել, թաքնվել են, մորից հիմնվել և վերահիմնվել՝ միշտ գործելով իրենց կանոնադրության հիման վրա: Եթե դրանք դիմացել էին Շապուհ Երկրորդ թագավորի աշխարհավեր արշավանքներին, որի ժամանակ հատկապես քանդվում էին եկեղեցիներն ու վանքերը, ոչնչացվում գրքերը, ապա կարող էին իրենց գործունեությունը վերսկսել և վերսկսել են նաև այդ հայ թագավորի յոթ տարվա կառավարումից հետո ևս:

Մաշտոցն ինքը Իրանի հպատակ էր, իսկ Մեծ Հայաստանում գործող կաթողիկոսներն էլ ասորի էին՝ նշանակված Իրանի թագավորի կողմից և հաշվետու նրան: Հայ թագավորները նույնպես նշանակովի էին՝ անկարող և զուրկ որևէ նշանակալի հարց ինքնուրույն լուծելու հնարավորությունից ու իրավունքից:

⁷ Տե՛ս **Խաչատրյան Ս. Ա.**, «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012: **Նույնի՝** Նորից հայկական այբուբենի ստեղծման հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012:

Հայ թագավոր Խոսրով Արշակունին գահագուրկ էր արվել այնպիսի ոչ առաջնային հարցեր ինքնուրույն լուծելու պատճառով, ինչպիսին Սահակ Պարթևին կաթողիկոս նշանակելն ու «Գահնամակում» նրա փեսայի տոհմը մի քանի աստիճան բարձրացնելն է։ Կարո՞ղ էին արդյոք նրան հաջորդած Վանանյայուի թագավորը կամ նրա որդի Արտաշիրը Մաշտոցին աջակցել նման հարցում և նրան միջոցներ տրամադրել կամ կանոնադրություն պատվիրել...։ Իսկ 428 թվականին հայ Արշակունի վերջին թագավորը գահընկեց արվեց մտացածին պատճառով և նրա տեղը զբաղեցրեց պարսիկ մարզպան։ Հարց է առաջանում՝ եթե հայ թագավորը ժամանակին ցրել էր վանքերը, ապա կարո՞ղ էր զրադաշտական պարսիկ թագավորը կամ ասորի կաթողիկոսը դրանց վերստեղծման համար միջոցներ տրամադրել կամ թույլ տալ, որ դա արվի կամ պատվիրել նման կանոնադրություն։ Եթե Մաշտոցը ստեղծեր այդ կանոնադրությունը, ապա ո՞վ պետք է հաստատեր և ուժ տար դրան, պարտավորեցներ վանքերին կատարել այդ նորմերը։ Նա ինքն անձամբ նման հնարավորություն չուներ և ընդամենը կատարող էր։

Բացի դրանից, Մաշտոցի հովանավոր և գուցե նաև՝ ազգական, կաթողիկոս Սահակ Պարթևը, սկսած 428 թվականից, իսկ որոշ այլ տվյալներով՝ շատ ավելի վաղ, նույնիսկ՝ վերջին Խոսրով թագավորի գահընկեցության հետ միաժամանակ, այն է՝ մոտավորապես 388թ.⁸, փաստորեն աստիճանագուրկ էր արվել Իրանի թագավորի կողմից, սահմանափակվել իրավունքների մեջ՝ զրկվելով կառավարչական-տնօրինչական ամեն մի լիազորությունից։ Ուստի այդ հարցում նա չէր կարող որևէ աջակցություն ցույց տալ Մաշտոցին։ Նույնիսկ նրա փեսա Համազասպ Մամիկոնյանի տոհմը «Գահնամակում» մի քանի աստիճան ինքնագլուխ բարձրացնելու համար հայոց Խոսրով թագավորը գահագուրկ էր արվել։ Նույնի համար Սահակ կաթողիկոսն ինքը ստիպված գնաց Իրանի թագավորի մոտ որպես խնդրարկու։ Եվ եթե այդպես է, ապա ինչպե՞ս կարող էր նա շատ ավելի կարևոր այս հարցում նախաձեռնություն և աջակցություն ցուցաբերել։ Դրա հետ միաժամանակ չի կարելի հերքել, որ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը, այլ հայրենասեր կրոնավորների ու իշխանների աջակցությամբ, բացել են դպրոցներ, գուցե նաև՝ որոշ վանքեր, դրանցում կազմակերպել հայոց լեզուն ուսանելու և ուսուցանելու գործը։ Եվ դա՝ Գր. Լուսավորչի ու Ազաթանգեղոսի հայերեն ավեստական տառերով գրած գրքերի ազդեցության տակ, որոնք Մաշտոցը հայտնաբերել էր Սամոս կղզում և տեղափոխել Հայաստան⁹։ Թվում է նաև, որ այդ ամենը արվել է գաղտնի։

Գր. Լուսավորիչն ուներ և ճառերը գրելու, և վանքեր ու եկեղեցիներ հիմնելու շնորհք, հնարավորություն և անհրաժեշտություն։ Նա եղել է Մեծ Հայաստանի եկեղեցու ղեկավարը, գլխավոր դատավորն ու օրենսդիրը։ Վանքեր չստեղծել, քարոզության համար պիտանի, գրագետ մարդիկ չստեղծել նա չէր կարող։ Այդ վանքերը ստեղծվում էին որպես զրադաշտական տաճարական քաղաքներին ու տաճարներին փոխարինելու եկած և դրանց համարժեք գիտակրթական, ծիսա-

⁸ Տե՛ս *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 396, (397), 446 (447), 520։

⁹ Տե՛ս *Խաչատրյան Ս. Ա.*, «Հաճախապատում ճառքի» հեղինակության հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012։ *Նույնի*՝ Նորից հայկական այբուբենի ստեղծման հարցի շուրջ // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 14, 2012։

կան արարողակարգերի մշակման և հավատի քարոզման հաստատություններ, տաճարների ու մեխյանների դեմ կռիվներ, և նա պարզապես չէր կարող դրանց ստեղծմամբ ու կանոնադրությամբ չզբաղվել: Նա է նոր՝ քրիստոնեական պետության և նոր տիպի եկեղեցու՝ որպես պետականորեն ճանաչված ինստիտուտի և պետության բաղկացուցիչ մասի հիմնադիրը: Իսկ վանքերը եղել են եկեղեցու և պետության կարևոր բաղկացուցիչ մասը, նրանց համար սպասավորներ, դատավորներ, դիվանագետներ, դպիրներ պատրաստող գիտակրթական հիմնարկությունների համալիրը:

Զի բացառվում, որ նրա կանոնադրությունը եղել է որևէ գրադաշտական տաճարական քաղաքի կանոնադրության հիման վրա կազմված: Բոլոր դեպքերում «ԻԳ» ճառը, ինչպես մնացած բոլոր ճառերը, գրված են և կարող էին գրված լինել միայն Գր. Լուսավորչի կողմից: Դա իրավաբանական նշանակության փաստաթուղթ է, որի մեջ, ինչպես այլ ճառերի, առկա են բազմաթիվ գրադաշտական նորմեր, այդ թվում՝ դեղիկտային, որոնց թվում են նաև հիշատակումները իրավախախտ մարդկանց «քարշելու», «գետնաքարշ» անելու կամ քարշ տալու մասին: Դրանք էլ այն բազմաթիվ ապացույցներից են, որոնք նույնպես վկայում են ճառերը Գ. Լուսավորչի կողմից գրվելու մասին: Նա խնդիր ուներ ստեղծել նոր քրիստոնեական պետություն, պետական եկեղեցի և իրավունք, որոնք դեռևս ոչ մի տեղ չկային, ապահովել հայկական գրադաշտական և քրիստոնեական իրավական, կրոնական, բարոյական և այլ սիստեմների (համակարգերի) միջև ժառանգական կապը՝ դա անելով գրադաշտական ձևերի ու նորմերի ռեցեպցիայի, տեղափոխման ու ներդրման միջոցով, առանց որի քրիստոնեական պետություն և եկեղեցի, իրավական, բարոյական, կրոնական, քաղաքական, տնտեսական, էսթետիկական սիստեմներ ստեղծել հնարավոր չէր: Աստվածաշնչի և քրիստոնեական սեկտաներում ստեղծված իրավունքը հնարավոր չէր կիրառել պետության մեջ, դրա մարմինների կողմից: Դրա համար նա համարձակորեն ընդօրինակել է գրադաշտական պետական ու իրավական ձևերը, նորմերը, ինստիտուտներն ու ճյուղերը, մերժել դրանց մի մասը, հատկապես խեթուկոասն ու ամուսնաընտանեկան նորմերը, ընդունել ու ադապտացրել-հարմարեցնել դրանց այլ մասը, վերջիններիս հաղորդել այլ իմաստ ու բովանդակություն, զարգացրել դրանք, ստեղծել նորերը: Սահակ կաթողիկոսի և նրա ենթակա Մաշտոցի խնդիրը գրադաշտականի հետ այդ կապը խզելն էր, քանզի այլ կերպ, վերստին գրադաշտական ֆեդերացիայի սուբյեկտ դառնալուց հետո, հայ պետության, եկեղեցու և ժողովրդի ինքնությունը և գոյությունը վտանգված էր:

Մեր մի աշխատության մեջ արդեն մասնակի անդրադարձ է կատարվել հանցագործներին քարշելու խնդրին¹⁰: Բայց քարշելը գրադաշտական և քրիստոնեական իրավունքի կարևոր հիմնահարց է՝ կարո՞տ ավելի մանրամասն քննության և վերլուծության: Քարշելուն «Հաճախապատում ճառքում» Գր. Լուսավորչին առաջին անգամ անդրադարձ է կատարել «Թ» ճառի 32 տանը: Այնտեղ ասված է. «Զի յորժամ յաւելուած սուտ կարծեացն մտին ի նախաստեղծն մարդն յայրն եւ ի կինն ի մախանաց բանսարկուին, եւ ի հրապուրանաց հեշտութեանն քար-

¹⁰ Տե՛ս *Խաչատրյան Ս. Ա.*, Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010:

շեալ եւ սուտ կարծեալք աստուածք լիեալ՝ խաբեցան եւ ոչ պահեցին զպատուեր Արարչին իւրեանց, եւ ելին ի փափկութեան դրախտէն եւ զմահ ստացեալ ժառանգեցին»։ Այնուհետեւ դրան անդրադաձ է կատարվում «ԻԳ» ճառում, որի մասին արդեն նշվեց։ Դրա 96 տանը ասված է. «Եւ այսպիսի հաւանական մտաւք եւ սուրբ սիրով վերաբերիլ յամենայն վնասակարացն՝ որ ընդ երկիր **քարշէ**։ Վերնոցն զհետ երդալ երկնայնոցն եւ անմահից, որ կուսութեամբ է նոցա սեպհակա՝ նութիւնն եւ անարատ վարք եւ հանապազորդ փառաբանութիւն Ամենասուրբ Երրորդութեանն»¹¹։ Նույն «ԻԳ» ճառի 107 տանն էլ վանականներին առաջարկվում է «Լնուլ զպակասութիւն վերնոցն ներքնովքս առաքինութեամբք. վերաբերեալք ի **գետնաքարշիցս**, եւ հաղորդակից լինել բարւոյ քաղաքավարութեանն, եւ ընդ նոսա միաձայնեալ Ամենասուրբ Երրորդութեանն մատուցանեն զփառս անճառելի աւրինութեամբ»։

«Հաճախապատում ճառքի» թարգմանիչներից ոմանք «Թ» ճառի 32 տանը հիշատակված «քարշեալ», բառը թարգմանել են «քաշքշել», «ԻԳ» ճառի 96 տանն առկա «...որ ընդ երկիր քարշէ» բառակապակցությունը՝ «...որ ձգտում է դեպի երկիրը»։ Նույն ճառի 107 տան «...Լնուլ զպակասութիւն վերնոցն ներքնովքս առաքինութեամբք. վերաբերեալք ի գետնաքարշիցս...» բառակապակցությունն էլ թարգմանվել է որպես «...վեր ելնելով այս գետնի վրա շրջողներից...»¹²։ Իրականում «Թ» ճառի 32 տանը մարդիկ զգուշացվում են հեշտության հրապուրանքների հետևից գնալու և նման վարքագիծ ցուցաբերելու հետևանքով երկրի վրա կամ դժոխքում քարշվելու միջոցով պատժվելու վտանգից, ինչպես ժամանակին դեպի երկիր են «քարշվել» Ադամն ու Եվան՝ վտարվելով դրախտից։ «ԻԳ» ճառի 96 տանը Գր. Լուսավորչի կողմից վանականները զգուշացվում են երկրային հաճույքների ազդեցության տակ երկնայինից դեպի երկիր «քարշվելու» կամ «քարշ տրվելու» նույն վտանգից ու հեռանկարից։ Դա նաև սուրբ եղբայրությունից քարշելու միջոցով դեպի աշխարհի հեռացվելու մասին նախազգուշացում-հիշեցում է։ Իսկ 107 տան «...Լնուլ զպակասութիւն վերնոցն ներքնովքս առաքինութեամբք. վերաբերեալք ի գետնաքարշիցս...» արտահայտությունն էլ պետք է թարգմանել «...պարտավոր են առաքինությամբ վերաբերվելով **գետնաքարշների** նկատմամբ...», և ոչ թե « վեր ելնելով այս գետնի վրա շրջողներից...»։ Այնտեղ առաջարկվում է գոթություն ցուցաբերել այն մարդկանց նկատմամբ, որոնք «գետնաքարշ» են եղել ժամանակին՝ այդ բառի տակ այլաբանորեն նկատի ունենալով նախկին զրադաշտականներին և հանցագործներին, որոնք ժամանակին պատիժ են կրել քարշվելու ձևով։ Դա նաև նախազգուշացում է նրանց հասցեին, որոնց սպասվում է գետնաքարշ լինելու հեռանկար, եթե չդառնան քրիստոնեությանը։ Եվ քարշելը, դրա կիրառումը, ինչպես նաև ամեն տեսակի տառապանք պատճառելու միջոցները, որոնք կիրառվել էին նրա նկատմամբ, այստեղ Գր. Լուսավորչի կողմից օրինականացվում են, լեզվացվում, արդարացվում և քրիստոնեացվում են։

Այնպես որ «քարշել» և «գետնաքարշ» բառերն այստեղ պատահական կամ

¹¹ Տե՛ս Հաճախապատում ճառք // Մատենագիրք հայոց, Ա հատոր, Ամֆիլիաս-Լիբանան, 2003, էջ 135։

¹² Տե՛ս **Գրիգոր Լուսավորիչ**, Յաճախապատում ճառք, թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի, Թեհրան, 2003, էջ 308-309։

սոսկ գեղարվեստական հնարանքներ ու արտահայտչամիջոցներ չեն: Քարշելը եղել է հայկական զրադաշտական իրավունքում կիրառվող քննության մեթոդ, պատժատեսակ: Այն եղել է նաև որպես կանխման և նախականիման (պրոֆիլակտիկ) միջոց, կիրառվել է հանցագործին կամ ուրիշներին վախեցնելու և նրանց «հլուծյան» հակելու, ինչպես նաև մեղավորի պատիվն ու արժանապատվությունը հրապարակավ ստորացնելու, նրա նկատմամբ արհամարհանք արտահայտելու համար: Այնուհետև, այն դատավճռով նշանակվել է որպես պատիժ և կիրառվել հրապարակավ, մարդաշատ վայրերում՝ նույն դրդումներով: Շատերի համար մահը գերադասելի է եղել քարշելուց, և հենց դրա ստորացուցիչ դրսևորումների ու հետևանքների, դրանից ամեն կերպ խուսափելու անհրաժեշտության մասին էլ իր ճառերում հիշատակում և նախազգուշացնում է Գ. Լուսավորիչը: Իսկ դա նշանակում է, որ նրա կողմից քարշելը եղել է օրինականացված և քրիստոնեական իրավական սիստեմի մեջ ներդրված: Քարշելը ոչ մի ծագումով այլազգի քրիստոնյա կամ հեթանոս եվրոպական աստվածաբանի կամ իրավաբանի աշխատությունում չի հիշատակվում:

Քարշելը նույն նշանակություններով հիշատակվում է նաև Գ. Լուսավորչի ժամանակակից և զաղափարակից Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» գրքում: Դա էլ ևս մեկ անգամ վկայում է «Հաճախապատում ճառքի» ու Ազաթանգեղոսի «Հայոց պատմության» գրվելու միաժամանակության, հոգեհարազատության և վավերականության մասին: Ազաթանգեղոսը պատմում է, որ դեռևս հեթանոս ու զրադաշտական Տիրիդատ Երրորդ թագավորը, երբ տեղեկանում է, որ իր թիկնազորի անդամ և ուղեկից Գր. Լուսավորիչը քրիստոնյա է և ոչ թե զրադաշտական, ապա սկսում է որպես հավատուրաց հանցագործի հարցաքննել նրան: Քրիստոնեությունը, ինչպես Հռոմեական կայսրությունում, այնպես էլ Իրանում և Հայաստանում, հայտարարված է եղել որպես օրենքով արգելված հանցավոր կրոն, իսկ դրան պատկանող կամ հարող, կամ համակրող ամեն ոք այդ փաստի ուժով դիտվել է որպես վտանգավոր հանցագործ: Դեռևս Տիրիդատ Մեծի հայր Խոսրով Մեծը հայտնի է եղել որպես քրիստոնյաների դաժան հետապնդող, որի մասին հիշատակում է Մ. Խորենացին¹³: Նրանց նկատմամբ Տիրիդատ Երրորդի վերաբերմունքը նույնքան դաժան էր, որը դրսևորվել է նրա երկու հակաաղանդավորական հրամանագրերի մեջ:

Գր. Լուսավորչի նկատմամբ այդ թագավորի կողմից իրականացվող նախաքննության ընթացքում կիրառվել են զանազան տանջալից ներգործության միջոցներ, այդ թվում՝ քարշ տալը: Այդ մասին Ազաթանգեղոսն ասում է. «Արկին (Գրիգորին- Ս. Խ.) ի վերայ տատասկին մերկ. և ծակոտեալ լինէին մարմինք նորա առհասարակ. և **քարշեցին** և թաղեցին զնա ի տատասկին. և շրջշրջէին զնա անդէն, մինչև առ հասարակ ծակոտեցան մանրիկ մարմինք նորա, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ»¹⁴: Այս դեպքում քարշելը կիրառվել է որպես քննության մեթոդ և ապացույց հավաքելու, կորզելու, նրան քրիստոնեությունից հրաժարվել ստիպելու միջոց: Իսկ երբ քննության ընթացքում պարզվել է, որ Գրիգոր Լուսավորչը Անակ իշխանի որդին է, որն սպանել էր Տիրիդատի հայր Խոսրով Մեծին, իսկ նա էլ շարունակել է մնալ իր «սուտ» հավատին և հրաժարվել դառնալ զրա-

¹³ Տե՛ս *Սովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 259:

¹⁴ Տե՛ս *Ազաթանգեղոս*, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 72 (73):

դաշտական (որը զրադաշտական օրենքով համարվում էր իրադրության լուրջ փոփոխություն), ապա նա թագավորի կողմից անմիջապես դատապարտվել է մահվան՝ Խոր Վիրապում փակելու միջոցով: Խոր Վիրապ էլ նա տարվել է «կապեալ ոտիւք, և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ»¹⁵: Գետնաքարշ անելուց առաջ հանցագործները հենց այդպես են կապվել:

Ագաթանգեղոսի գրքում հանցավորին քարշ տալու մասին հաջորդ հիշատակումը կատարվել է 178 պարբերությունում: Երբ Յոնիսիմեն հրաժարվում է թագավորի հրամանով գնալ պալատ (հարեմ) և դառնալ նրա կինը (կանանցից մեկը, հարճը, քանզի թագավորն արդեն առնվազն երկու կին արդեն ուներ, որոնցից մեկը Աշխադարի աղջիկ Աշխենն էր, մյուսը՝ իր քույր Խոսրովիդուխտը: Որպես ուղղահավատ զրադաշտական, խեթուկդասի ինստիտուտի հիման վրա, նա պարտավոր է եղել ամուսնանալ իր որբացած քրոջ հետ, և Ագաթանգեղոսը թագավորի այդ քրոջը իր գրքի 216 պարբերության մեջ¹⁶ ուղղակի անվանում է Տիրիդատի կին), ապա թագավորը՝ իմանալով նրա կամակորության մասին, հրամայում է բռնությամբ նրան բերել պալատ: Դրանից հետո, «արդ՝ առեալ զսուրբն Յոնիսիմէ սպասաւորացն բռնաբար, մերթ վերամբարծ, մերթ **ի քարշ...**»¹⁷ բերման է ենթարկվել պալատ:

Պալատում գտնված ժամանակ Յոնիսիմեն չի համաձայնվում կենակցել Տիրիդատ Մեծի հետ և դիմադրություն է ցույց տալիս: Թագավորը հրամայում է պալատ բերել մայրապետ Գայանեին, որպեսզի նա Յոնիսիմենին հակի իր հետ կենակցելու՝ որպես ամուսնու: Գայանեին պալատ են բերում պարանոցին կապած պարանով քաշելու միջոցով: Այդ մասին 182 պարբերությունում ասված է. «...ետ ածել զերանելին Գայանէ, և արկանել խառան ի պարանոց նորա և ածել ունել զնա առ դուրս սենեկին»¹⁸: Նա պարանը վզին քարշ տալով է բերվել պալատ, քանի որ նրա քրիստոնյա, այն է՝ հանցագործ լինելը արդեն ապացուցված է եղել:

Քարշ տալու մասին, որպես քննության մեթոդի և որպես պատժատեսակի, հիշատակված է նաև Տիրիդատ Մեծի նշանավոր հակաքրիստոնեական առաջին հրամանագրում: Դրանով նա հրամայում է բոլոր նրանց, ովքեր կմերկացվեն աստվածներին անպատվելու մեջ՝ «**կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք և կապեալ պարանոցաւ** ի դուռն արքունի ածցեն»¹⁹: Իսկ այդպես կապված մարդկանց հնարավոր էր «դուռն ածցել», այսինքն՝ դատարան բերել միայն քարշ տալով:

Այնուհետև, Ագաթանգեղոսը՝ պատմելով հնձանում և այլ վայրերում սպանված քրիստոնյա կույսերի ու վանամայր Գայանեի մասին, գրում է, որ մահապատժելուց հետո «**Եւ քարշեալ ի բաց ընկեցին զմարմինս նոցա՝ առ ի կեր լինել շանց քաղաքին և գազանաց երկրի և թռչնոց երկնից**»²⁰: Ինչպես տեսնում

¹⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 76 (77):

¹⁶ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 121:

¹⁷ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Նույն տեղում, էջ 104 (105):

¹⁸ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Նույն տեղում, էջ 106-108:

¹⁹ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Նույն տեղում, էջ 82 (83):

²⁰ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Նույն տեղում, էջ 116 (117):

ենք, այս դեպքում արդեն քարշ տալը ոչ թե քննության ժամանակ կիրառվող հանցագործության բացահայտման հնարք է, քննության մեթոդ, ինչպես առերեսումը, ծեծը, տանջանքները և այլն, այլ պատժատեսակ, և այստեղ առկա է դատավճռով մահապատժի ենթարկվածներից ոմանց դիակների, ոմանց էլ՝ մինչև մահապատժի վայրը շղթայակապ քարշ տալու փաստ: Այս վերջին դեպքերում քարշելը հանդես է եկել որպես լրացուցիչ պատժատեսակ՝ զուգակցված մահապատժի հետ:

Ինչպես նկատում ենք, Ագաթանգեղոսն այստեղ գրում է, որ կույսերի դիակները «քարշելով դուրս են գցելու» (քաղաքից – Ս. Խ.) մասին, որպեսզի դրանք կեր դառնան քաղաքի շներին, երկրի գազաններին ու երկնքի թռչուններին: Ավելորդ չի լինի նշել, որ Ագաթանգեղոսի մեկնիչները այդպես էլ չեն հասկացել, որ այս և այլ նման դեպքերում խոսքը զրադաշտական «մահվան ծեսի» իրականացման մասին է՝ նկարագրված Ավեստայի «Վիդևդատ» նասքի «Մահվան ծես» ֆրակարդում²¹: Սուրբ կույսերի դիակները ոչ թե թաղվել են հողի մեջ, ինչպես պահանջում է քրիստոնյաների մահվան ծեսը, այլ քարշ տալով տարել և դրել են քաղաքից դուրս գտնվող բարձրադիր դախմի (դախմա) վրա²², այդ ծեսի կանոններին համաձայն ամրացրել դրանց վրա՝ վերջույթներից կապելով ցցերից և թողել այդպես, որպեսզի շները, վայրի գազաններն ու թռչունները նրանց մարմնի փափուկ մասերը լափեն և ոսկորները փափուկ հյուսվածքներից ազատելիս ցրիվ չտան: Եվ այս ամենը միանշանակ վկայում է այն մասին, որ կույսերի նկատմամբ կատարվել է զրադաշտական թաղման արարողություն: Նրանց մարմինները չէին կարող թույլ տալ թաղել, քանի որ դիակը թաղելով անպատվվում և արատավորվում էր սրբազան տարերք հանդիսացող հողը: Դիակ թաղելը զրադաշտական իրավունքով հանդիսացել է հանցագործություն, որի համար նախատեսված են եղել սարսափելի պատիժներ՝ սկսած «հլության հակող» ձիու մտրակի 500 հարվածից²³:

Ինչ վերաբերում է այն փաստին, որ Գր. Լուսավորչին, որպես հանցագործի, Խոր Վիրապ, այն է՝ դժոխք գնալու երկրային նախադուռ հասցնելիս նույնպես քարշ են տվել, ինչպես սուրբ կույսերի դիակները՝ մինչև դախմ, ապա դա նույնպես պատահականություն կամ Ագաթանգեղոսի երևակայության արդյունք չէ, ոչ էլ իշխանության կամայականության դրսևորում: Մի բան, որը բացառված է եղել զրադաշտական կրոնի, իրավունքի ու բարոյականության նորմերով: Դատապարտյալին Խոր Վիրապ իջեցնելն էլ միանշանակ եղել է նորմատիվ բնույթ ունեցող մահվան ծես, քանի որ այդ ակտը մահապատիժ իրականացնելու, մարդուն մահ պատճառելու և դժոխք ճանապարհելու ակտ է, և պետք է իրականացվեր նրան ստորացնելու ու նրա նկատմամբ արհամարհանք ցուցադրելու արա-

²¹ Տե՛ս Աвестա в русских переводах (1861-1996). Составление, общая редакция, примечания и справочный раздел И. В. Рака // Журнал «Нева», «Летний сад», СПб, 1998, էջ 96-119:

²² «Դախմ» բառի փոխաբան Ֆ. Վոլֆը օգտագործում է գերմաներեն համարժեք բառ, իսկ Ֆ. Շպիգելը՝ «Dakhma». Հետևաբար դրա անվանումը «Դախմ» է և ոչ թե «դահմ»: Այդ մասին տե՛ս *Wolff Fritz*. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomaeus Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, S. 365; *Spiegel Friedrich*. Avesta. Die heiligen Schriften der Parsen. Bd 1-3, Leipzig, Verlag von Wilhelm Engelmann, 1852-1863, B. 1, S.140.

²³ Տե՛ս Աвестա в русских переводах (1861-1996)....., էջ 96-119:

րողությամբ: Դա ևս ապացույց է Ագաթանգեղոսի գրքի արժանահավատության մասին, ապացույց այն բանի, որ նրա գիրքը ականատեսի կամ դեպքերի ժամանակակցի կողմից է գրված և միանշանակ հավաստի է:

Փաստը, որ կույսերին կամ նրանց դիակները քարշ տալով են հասցրել դախմ` լուրջ հայտնագործություն է զրադաշտական իրավունքի մեջ: Դա, ինչպես նաև կապված վիճակում կասկածյալներին, մեղադրյալներին «դուռը (դատարան) բերելը» նշանակում է, որ ընդհանրապես հանցագործներին, հատկապես` կրոնական բնույթի հանցագործություն կատարած, դատարան, պատժի վայր կամ էլ նրանց դիակները դախմ են բերվել գետնաքարշ կամ էլ քարշ տալու միջոցով: Ագաթանգեղոսը գրում է, որ Յեփսիմեն` թագավորական պալատից դուրս փախչելուց հետո, գնացել է «...քաղաքից հեռու հյուսիսային կողմի արևելք ընկած մի վայր, մի ավազուտ սարավանդ բարձրավանդակ...», որտեղ էլ սպասել է իր դահիճներին: Ավեստագետներից ու «Ագաթանգեղոսագետներից» և ոչ ոք չի հասկացել, թե ինչու է Յեփսիմեն եկել այդ «հյուսիսային» վայրը: Ճշմարտությունը նրանում է, որ նրա գնացած վայրը ընդամենը եղել է մի դախմ, որի վրա դնում էին մեռելներին, որպեսզի քաղաքի շները, վայրի գազաններն ու թռչյունները նրանց հոշոտեն և ոսկորները «մաքրեն» հյուսվածքներից: Նա ընդամենը իմացել է այդ դախմի տեղը և այնտեղ գնացել կամավոր, որպեսզի խուսափի գետնաքարշ կերպով այնտեղ բերվելուց: Նրան այնտեղ էլ գտել են դահիճները, տանջել, կապել վերջույթներից ու մահապատժի ենթարկել²⁴: Լինելով ազնվական կին` նա ամեն ինչ արել է քարշվելու մասն ստորացուցիչ արարողությունից խուսափելու համար: Իսկ քարշելը իր բոլոր դրսևորումներով հենց մարդու պատիվն ու արժանապատվությունը, հիշատակը ստորացնելու նպատակ է ունեցել:

Դրանով երկրի վրա մանանկվել է այն հավատալիքը, ըստ որի մահացած մեղավորների հոգիներին նրա մարմնի մոտից դները քարշ տալով են հասցրել աստվածային դատարան, այնտեղից էլ` դժոխք: Ավեստայի «Զորոաստրի փորձությունը» գաթայի 29 տան և «Դատաստան-ի մենոգ-ի խրատի» նախաբանի համաձայն, երբ մահացած մեղավորի հոգին թողնում է նրա մարմինը, ապա նրա անմահ հոգու հետևից գալիս է մահվան չար դև Վիզարշը և «նրա հոգին կապելով ամենասարսափելի միջոցներով»` քարշ տալիս դեպի Զինվադ կամրջի մոտ: Այնտեղ նրա նկատմամբ աստվածների կողմից իրականացվում է զրավոր դատաքնություն, որի ժամանակ դատը վարող աստվածներից Ռաշնը ոսկե կշեռքով կշռում է մարդու կատարած բարի ու չար մտքերը, խոսքերը, գործերը: Եթե գերակշռում են մեղքերը, ապա մարդու մեղավոր հոգին դատապարտվում է դժոխք գնալու: Դրանից հետո դև Վիզարշը նրան դաժանորեն ծեծի է ենթարկում և «քարշ տալիս ամենաներքին դժոխքը»: Ճիշտ այդպես էլ վարվել են Գր. Լուսավորչին Խոր Վիրապ նետելիս, իսկ կույսերի դիակները դախմի վրա դնելիս²⁵: Տիրիդատ Մեծ թագավորի հակաաղանդավորական հրամանագրում ասված է, որ աղանդավորներին «ոտքերը, ձեռքերն ու պարանոցը կապած բերել արքունի

²⁴ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Դայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 112 (113):

²⁵ Տե՛ս Авеста в русских переводах (1861-1996)..., էջ 124; Зороастрийские тексты. Суждения Духа разума (Далестан-и меног-и храт). Подготовлено к печати О.М. Чунаковой // «Восточная литература», М., 1997 (Памятники письменности Востока, CXIV), էջ 112:

դուռը»²⁶: Ինչպես տեսնում ենք, Ազաթանգեղոսի երկուն և պարսկական աղբյուրներում քարշելու ու կապելու ձևերը, նպատակները և իմաստը նույնն են, և դա վկայում է ինչպես Ազաթանգեղոսի հաղորդած տվյալների ճշտության ու վավերականության, այնպես էլ պարսկական աղբյուրների հնության և վավերականության մասին:

Որ այդ վայրը եղել է դախմ, վկայում է նաև այն հանգամանքը, որ այն գտնվելիս է եղել քաղաքի դարպասներից դուրս, և դա հոտի, ինչպես նաև այն պատճառով, որպեսզի չխանգարվի գազանների կողմից դիակների հոշոտումը: Իսկ որ այն գտնվել է քաղաքի հյուսիսային կողմում, ապա դա նշանակում է, որ այն եղել է նաև հանցագործներին մահապատժելու վայր և նրանց դիակները դնելու համար նախատեսված դախմ: «Հյուսիսային կողմը» Ավեստայում²⁷ ու զրադաշտական հավատալիքներում դիվական, դժոխային, «ծախակողմյան» կողմ է համարվել: «Հյուսիսում» են բնակվել դևերը և դիվական ժողովուրդները՝ Կովկասի լեռնականները, սկյութները և թուրանցիները: Դժոխքի մուտքերն ու ելքերը, որոնցից ելումուտ են արել դևերը, գտնվել է հյուսիսում և այն հավասարեցվել է դժոխքին: Ազաթանգեղոսի երկուն էլ Հայաստանի զրադաշտական կործանված մեհյաններից ու տաճարներից հենց «հյուսիս» էին փախչում դևերը և քրմերը²⁸: Դրա համար էլ դախմերը, որոնց վրա դրվում էին դժոխք գնալու ենթակա մեղավորների դիակները, կառուցվել են քաղաքների ու բնակավայրերի հյուսիսային կողմում, իսկ երկնային թագավորության թեկնածուներինը՝ հարավային, որի մասին Հռիփսիմեն գիտեր: Հռիփսիմեի գնացած և դահիճներին նրա սպասելու վայրի դախմատեղի լինելը հիմնավորվում է նաև նրանով, որ այն եղել է մի «ավագուտ բարձրավանդակ»: Դա նշանակում է, որ սրբազան տարրերը համարվող հողը պատած է եղել ավագով, որպեսզի մարդու մարմնի հետ շփվելուց չապականվի:

Հռիփսիմեին մահապատժելիս նրան պառկեցրել են դախմի վրա, նախապես կապել վերջույթներից, հանել հագուստները, որից հետո տանջել և սպանել, թողնելով այնտեղ որպես գազաններին կեր: Շատ կույսերի, որոնք փորձում էին Հռիփսիմեին ազատել դահիճների ձեռքից, մահապատժել են հենց այդ դախմի վրա: Ոմանց էլ մահապատժել են մինչև դախմի վրա տեղափոխելը, ինչպես հնձանում սպանված կույսը, հետո նոր միայն քարշ տալով տեղափոխել դախմի վրա, մերկացրել և կապել, քանզի ըստ մահվան ծեսի, նրանց միայն մերկացրած իրավունք ունեին կապել դախմին: Այս ամենը վկայում է այն մասին, որ հանցագործների ու ոչ հանցագործների թաղման ծեսերը, ինչպես նաև իր մահով մահացած հանցագործի ու մահապատժվող հանցագործի մահվան ծեսերը միմյանցից տարբերվել են, իսկ նրանց դախմերը եղել են առանձին: Դախմերը բաժանված են եղել երկու տեսակի՝ դախմեր՝ նախատեսված առաքինիների և սրբակյացների կամ արդարակյացների համար և դախմեր՝ նախատեսված չարերի, չարագործների ու հանցագործների համար: Դրանց տարբերության մասին նաև ուղ-

²⁶ Տե՛ս **Ազաթանգեղոս**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 78-83:

²⁷ Տե՛ս **Авеста в русских переводах** (1861-1996), էջ 100, 117, 120, 411.

²⁸ Տե՛ս **Ազաթանգեղոս**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, էջ 438 (439):

ղակի նշում է Ազաթանգեղոսը՝ Գայանեի մահապատիժը նկարագրելիս²⁹:

Հանցագործներին՝ կենդանի, թե մեռած, քարշ տալով են հասցրել դախմի վրա, այնտեղ սպանել և կապել, կամ կապել, տանջել և սպանել են: Բնական ճանապարհով արդարակյաց մահացածներին այնտեղ են հասցրել պատիվներով, երգեցողությամբ ու երաժշտությամբ, ցնծագին՝ համոզված լինելով, որ նա երկնային թագավորություն է գնալու: Դրա համար էլ ազելված է եղել արդարակյաց մահացածի վրա սգալը: Նրանց համար նախատեսված դախմը եղել է դեպի երկնային թագավորություն ուղևորվելու հարթակ, իսկ խոր Վիրապն ու հանցագործներին մահապատժելու կամ այնտեղ նրանց դիակը կապելու համար նախատեսված դախմը եղել են դեպի դժոխք (գերեզման) տանող նախադռներ, որոնց վրա չէին կարող դրվել ու կապվել արդարակյացների դիերը: Խոր Վիրապն էլ չի եղել բանտ, ընդ որում՝ եզակի, նմանը չունեցող, ինչպես դա թվում է իրավագիտության դոկտոր և պրոֆեսոր Ա. Թովմասյանին³⁰, այլ մահապատժելու սովորական վայր, փոս, միջոց, դրա հատուկ և մասայական տեսակ: «Խոր Վիրապ»՝ ինքնին նշանակում է դժոխք: Այս ամենի՝ դախմերի նման տարբերակման, Խոր Վիրապն³¹ ու նման դախմերը դժոխքի նախամուտքեր դիտելու մասին որևէ տեղեկություն, նման եզրակացության հանգելու որևէ հիմք չկա Ավեստայի «Մահվան արարողություն» և այլ ֆրակարդներում, զրադաշտական որևէ այլ աղբյուրում: Դրա հետևանքով էլ բացակայում է դրանց պատկերացումը և գիտակցումը ավեստագիտության մեջ: Ազաթանգեղոսի այս վկայությունը ոչ մի ուշադրության չի արժանացել ոչ ավեստագետների, ոչ էլ զրադաշտական իրավունքի մասնագետների կողմից, այդ թվում՝ հայ³²: Իսկ որ հանցագործներին մահապատժելու համար կառուցվելիս են եղել ոչ միայն խորվիրապներ, այլ նաև՝ հատուկ դախմեր, ապա դա ևս մի շատ կարևոր և անմախաղեպ հայտնագործություն է, ինչի մասին ոչ մի պատկերացում մինչև այժմ չի եղել:

Որ հանցագործներին մինչև դատաստանի վայր կամ հատուկ կերպով նրանց համար նախատեսված դախմ քարշ տալը զրադաշտական քրեական դատավարական իրավունքով և մահվան ծեսով նախատեսված գործողություն է եղել՝ մահվան միստերիայի բաղկացուցիչ մաս՝ հիմնավորվում է նաև հետևյալով: Հռիփսիմեին մահապատժելու հաջորդ օրը դահճապետը՝ ստանալով թագավորական հրամանը (դատավճիռը) Գայանեին մահապատժելու մասին, «... ետ հանել զնոսա շղթայիք ի քաղաքեն ընդ դուռն հարաւոյ, ընդ կողմն պողոտային, որ հանէր ի Մեծամորի կամուրջն, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամե-

²⁹ Տե՛ս **Ազաթանգեղոս**, Հայոց պատմություն, էջ 118 (119):

³⁰ Տե՛ս **Թովմասյան Ա. Թ.**, Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք, 2 հատորից, 3. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 1962, էջ 212, 213, 499, 554:

³¹ Հայկական գրականագիտության ու պատմության մեջ Արտաշատի Խոր Վիրապը դիտվում է որպես ինչ-որ եզակի կառույց: Իրականում խորվիրապները եղել են բազմաթիվ, օգտագործվել հանցագործներին պատժելու համար և դրանց մեջ մարդ իջեցնելը ուղեկցվել է մահվան ծեսով: Իրանում դրանց գոյության և բազմաթիվության մասին ուղղակի կերպով վկայում է եղիշեն: Տե՛ս **Նեղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, էջ 320 (321):

³² Տե՛ս **Ներսիսյան Հ.**, Հայկական լեռնաշխարհը ըստ Զրադաշտն ու իր Ավեսթան // Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, «Հեղինակային հրատարակություն», 2011:

նայն մահապարտս, ի ճախճախտ տեղ մի, մօտ ի պարկեն փօսին որ շուրջ գայր զքաղաքաւն: Եւ վարեցին չորս չորս ցիցս միում միում ի նոցանէն», որից հետո «... Ետ այսորիկ մատեան և պատառեսցին զհանդերձս նոցա յանդամոց նոցա և պրկեցին զնոսա մի մի ի չորս ցիցս»³³: Այս տողերից պարզ է դառնում, որ նորից, զրադաշտական օրենքին համաձայն, Գայանէին և նրա երկու ընկերուհիներին շղթայակապ վիճակում (կապած) **քառշ են տվել**, հանել քաղաքի հարավային դարպասից դուրս, տարել դեպի Մեծամոր գետի վրայի կամրջի մոտ, քաղաքի պարիսպը գոտևորող ջրով լի խրամի մոտ: Այդ կամուրջը եղել է կամ կարող էր լինել Արմավիր-Վաղարշապատ-Արտաշատ թագավորական ճանապարհի վրա, իսկ դա նշանակում է, որ թեև դատապարտյալներին դուրս են հանած եղել քաղաքի հարավային դարպասից, բայց նորից դեպի հյուսիս են տարել, քանի որ այդ կամուրջը և դրա մոտի դախմը պետք է նույնպես լիներ քաղաքից հյուսիս, այն նույն գծի վրա, ինչ որ դախմը, որի վրա մահապատժել էր Յոնիսիմեն:

Այն փաստն էլ, ըստ որի Գայանէին ու նրա հետի դատապարտյալներին տարել են մի այնպիսի դախմի վրա մահապատժելու, որը տեղադրված-կառուցված է եղել **Ճահճուտ վայրում, ջրով լցված** փոսի կամ քաղաքի ամրությունների մաս կազմող ջրով լի խրամի եզրին՝ նշանակում է, որ Ճահճուտ, անառողջ տեղանքը, որտեղ «սովոր էին սպանանել զամենայն մահապարտս», հանցագործների համար կառուցված դախմն է եղել, իսկ դրա շրջակայքը եղել է դժոխսանման մի մռայլ տեղ՝ հար և նման «Արտա Վիրապ նամակի» մեջ նկարագրված դժոխսային պատկերներին: Ճահճուտ տեղը, ինչպես հայտնի է, լինում է զեռուններով՝ օձերով, գորտերով, կարիճներով, մոծակներով լի, իսկ դրանք՝ խրաֆսթարները, ըստ զրադաշտական կրոնի, դժոխսային էակներ էին և ենթակա վերացման: Հագկերտ Երկրորդը՝ հայերից պահանջելով ետ դառնալ նախնիների հավատին, այն է՝ զրադաշտությանը, նրանցից յուրաքանչյուրից, բացի ամենայնից, պահանջել է իր հավատացյալությունը և նվիրվածությունը ապացուցելու համար տարեկան ներկայացնել նաև իր սպանած որոշակի չափի ու քանակի զեռունների մնացորդներ և մոխիր³⁴:

Ըստ «Արտա Վիրապ նամակի» համապատասխան գլուխների՝ դժոխքն էլ տեղ-տեղ Ճահճուտ, խոնավ, տոթ, սառցապատ, մութ ու խավար, չորս հարկաբաժիներից ու «օթևաններից» բաղկացած մի փոս է, փոսերի համակարգ, որոնցում զեռունները կամ խրաֆսթարները՝ օձեր, կարիճներ և այլն, դևերի հետ միասին կամ առանց նրանց տանջում են այնտեղ ընկած մեղավոր հոգիներին: Եվ ահա երկրի վրա հանցագործների համար կառուցված դախմն էլ հնարավորինս նմանեցված է եղել դժոխքի մի պատկերի³⁵: Իսկ որ նրանց, մինչև կապելը մերկացրել են, հանել նրանց հագուստները, նորից վկայում է այն մասին, որ նրանց նկատմամբ իրականացվել է զրադաշտական մահվան ծես: Իսկ այս ամենը կրկին ապացույց է այն բանի, որ Ագաթանգեղոսը հնարավորինս ճիշտ է արտացոլել դեպքերը:

³³ Տե՛ս **Ագաթանգեղոս**, Հայոց պատմություն, էջ 118 (119), 120 (121):

³⁴ Տե՛ս **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 106 (107):

³⁵ Տե՛ս Արտա Վիրապ նամակ: Յուշտի Ֆրիան, Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 68:

Գր. Լուսավորչի ու Ազաթանգեղոսի երկերում քարշելու ու կապելու մասին բազմաթիվ հիշատակումների հիման վրա կարելի է նաև հանգել հետևություն, որ քարշելը եղել է երկու տեսակ: Այն իրականացվել է ինչպես ձեռքերը, ոտքերը պարանոցին կապելու և «գետնաքարշ» անելու միջոցով, այնպես էլ պարանոց վիզը գցելու կամ շղթայակապ անելու, քաշելու միջոցով, որի ժամանակ ոտքերը չեն կապվել: Բայց վերջին դեպքում էլ նրանց պարանոց քարշել են: Գետնաքարշ անելը քարշելու ավելի խիստ տեսակ է: Ինչպես նկարագրում է Ազաթանգեղոսը, երբ թագավորի ծառաները գնում են Գայանեի հետևից՝ նրան պալատ բերելու, որպեսզի նա համոզի Զոփիսիմեին հանձնվելու թագավորին, ապա վերջինիս հրամանով նրան բերում են պարանոց վզին կապած վիճակում: «...և ետ ածել զերանելին Գայիանե, և արկանել խառան ի պարանոց նորա, և ածել ունել զնա առ դուրս սենեկին»³⁶: Նրան նույն կերպ շղթայակապ քարշ են տվել դախմի մոտ: Հասկանալի է, որ այդ կույսը ոչ մի տեղ փախչելու հնարավորություն չուներ: Բայց դա, ինչպես պարզ է արդեն, ոչ միայն անիմաստ չէ, այլ նաև խիստ իմաստավորված: Նրան պետք է հենց այդպես բերեին և ոչ թե այլ կերպ, ստորացնելով ու արհամարհական ձևով, քանզի արդեն իսկ ապացուցված էր նրա անհավատությունը և նա կարող էր բերման ենթարկվել միայն քարշելով:

Բացի դրանից, կարելի է հաստատապես ասել, որ գոյություն է ունեցել ծառայողների կամ գործակալ-կատարածուների հատուկ տեսակ, որոնք զբաղված էին նման մարդկանց կապելով և դատավորի մոտ քարշ տալով: Դրա վկայությունը «Արտա Վիրապ մամակի» գլուխ 58-ն է: Դրա մեջ նկարագրված է զրադաշտական սրբությունները անպատված և դրա համար դժոխքում տառապող մեկին, որին «**քարշ տվողները** քարշ էին տալիս դժոխք և շարունակ հարվածում էին»³⁷: Նշենք, որ ոտքերը, ձեռքերը և պարանոցը կապած վիճակում քարշ տալով խոր Վիրապ տարան նաև Գրիգոր Լուսավորչին³⁸, հետևաբար քարշ տվողների պաշտոն եղել է նաև Հայաստանում՝ ինչպես զրադաշտական, այնպես էլ քրիստոնեական: Այն կարող էր նաև զուգակցվել դահճի պաշտոնի հետ:

Այն, որ քարշ տալը զրադաշտական պատժատեսակ է, հիմնավորվում է նաև Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» տեղեկություններով: Այնտեղ ասվում է, որ երբ «մանուկ Գրիգորը», որը Գ. Լուսավորչի ծառանգներից էր և Վրաստանի ու Աղվանքի եպիսկոպոսը, գնացել է Կասպից ծովի ափին բանակած հոների և Զյուսիսային Կովկասի լեռնականներից կազմված Սանեսան Արշակունու բանակ՝ քրիստոնեություն քարոզելու, ապա այդ թագավորը, որը հասկանալի է, զրադաշտական էր և պատրաստվում էր Հայաստանի վրա հարձակվելու, նրան համարել է լրտես, հրամայել կապել ամեհի ձիու պոչից, և այդպես քարշ տալու միջոցով սպանել նրան, որն էլ կատարվել է: Պետք է ասել, որ սա զրադաշտական օրենքի հիման վրա մարդուն ձիու պոչից կապած քարշելու, ինչպես նաև այդ միջոցով նրան մահ պատճառելու կամ մահապատիժ իրականացնելու՝ պատմության մեջ նկարագրված միակ ձևն է: Նշանակալից է, որ այս սրբի դիակը դախմի վրա չի դրվել, ինչպես հայկական կույսերինը, այլ որպես քրիստոնյա-

³⁶ Տե՛ս *Ազաթանգեղոս*, Հայոց պատմություն, էջ 118-121:

³⁷ Տես՝ Արտա Վիրապ մամակ, Գլ. 58, էջ 88:

³⁸ Տես՝ *Ազաթանգեղոս*, Նույն տեղում, էջ 82 (83), 464 (465):

յի թույլատրվել է տանել Հայաստան և թաղել քրիստոնեական մահվան ծեսով, ինչն էլ արվել է³⁹:

Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գրքի հիման վրա կարելի է պնդել, որ քարշ տալը կամ քարշելը՝ որպես զրադաշտական իրավունքով նախատեսված հիմնական կամ լրացուցիչ պատիժ, հաճախ կիրառվել է նաև պարսկական իշխանությունների կողմից⁴⁰: Եղիշեն գրում է, որ Իրանի գերագույն դատարանի՝ թագավորական ատյանի կողմից դատապատվելուց հետո Վասակ Սյունուն «ուրոյն նովին կապանօք պահեին: Եւ օր ըստ օրէ բերեին իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ծաղկէին ու այպանէին և տեսիլ ամենայն կապանաւին զնա առնէին»: Այնուհետև նա գրում է, որ Վասակը «...իբրև զշուն մեռավ և իբրև գէշ (պետք է լիներ «զգէշ» - Ս. Խ.) քարշեցաւ»: Այս վկայություններից կարելի է եզրակացնել, որ թագավորության հավակնող Վասակ Սյունու նկատմամբ կայացված դատավճռով, բացի մահապատժից, նշանակված է եղել նաև կապանքների մեջ քարշելը՝ նրան ստորացնելու և նրա նկատմամբ հատուկ հրապարակային արհամարհանք արտահայտելու համար: Նրան ամեն օր, մինչև իր մահը, կապված վիճակում քարշ են տրվել հրապարակ, որտեղ նա ենթարկվել է ծաղրի և ստորացումների: Կարելի է կարծել, որ նրա մարմնի որդյնելը, որի հետևանքով վրա է հասել մահը, քարշելու հետևանքով առաջացած վերքերից է եղել:

Եղիշեն գրում է նաև, որ Դենշապուհը՝ քրիստոնյա դարձած մոզպետին, նրա հետ էլ հայ գերիներից ոմանց, համապատասխան դատավճիռ կայացնելուց հետո, տեղափոխել է մի «դժնդակ տեղ», որտեղ դահիճներին հրամայել է կապել «զոտս և զձեռս նոցա: Եւ արկին պարանս երկայնս յոտս նոցա, եվ երկու երկու լծեցան և առին իքարշ: Եւ այնպես նշեցին և ճողքեցին ընդ ապառաժ տեղիցն քարշելով, զի ամենակն խայծ ոչ մնաց ի մարմնս երանեալսն: Եվ ապա լուծին և ածին ի մի տեղի»: Այնուհետև, Եղիշեն պատմում է, որ մի խուժիկ իրենց պատմել է հայ երանելիների «զչարաչար քարշումն, և զհարց և զփորձ դատաւորացն...»⁴¹: Սրանք բոլորը ևս ոտք ու ձեռքը կապած մարդկանց գետնաքարշ անելու վկայություններ են՝ կիրառված հավատի դեմ ունեցված դատապարտյալների նկատմամբ:

Այն, որ քարշելը եղել է զրադաշտական պատժատեսակ, քննության մեթոդ, կանխման ու նախականիման միջոց, գալիս է Ավեստայից՝ հիմնավորվում է նաև հետևյալով: Ավեստայի «Վիդեհատ» նասքի «Շունը» ֆրակարդի 10 և 11 տներում ասված է, որ եթե որևէ մեկը «վնաս պատճառի հոտը պահակող շանը,որի հետևանքով գողը կամ գայլը (որը դիտվում է գող՝ զագանների մեջ) քարշ տա տանի («уташи») անասուն, ապա վնաս տվողը պետք է հատուցի այն»: Ավեստայի «Արդ-յաշտի» 38 տանը ասված է. «Ահա այսպես էր նա (Խոմը, Խաոմը – Ս. Խ.) խնդրում Աշիին. «Տուր ինձ այնպիսի հաջողություն, բարերար Աշի, որպեսզի կարողանամ գերել ես Ֆրանխրասյան Թուրանցուն: Եվ կապկապված տանեմ ես, որ կապկապված բերեմ ես՝ չարագործին այդ, Խոսրովի մոտ...»: Իսկ,

³⁹ Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 26:

⁴⁰ Տե՛ս **Եղիշե**, Վարդանի և հայոց պատերազմի մասին, էջ 280-283, 322 (323), 366 (367):

⁴¹ Տե՛ս՝ Նույն տեղում, էջ 280-283, 322 (323), 366 (367):

ինչպես դա արդեն պարզ է դառնում վերոգրվածից, «կապկաված» նշանակում է ոտ ու ձեռքը պարանոցից կապած մարդ, որը դատաստանի վայր կարող է բերվել քարշ տալով: Ավեստայի «Միհր-յաշտի» 38 տանը ասված է. «Ավերվում են մռայլ որջերը, լքված տները, որոնցում ապրել էին Միհրին ստած ստի կողմնակիցները՝ արդարակյացներին սպանող: Փախցրած արոտավայրից ցուլը սարսափելի ճանապարհով գերի է գնում, դեպի Միհրին թշնամի մարդկանց թաքստոցները: Քարշում են նրան իրենց կառքի հետևից նրանք, իսկ նա թափում է արցունքներն իր, և հոսում են դրանք նրա մռուքի վրայով»:

Ավեստայի «Ձորոաստրի փորձությունը» գաթայի 29 տանն էլ ասված է. «Վիզարշ անունով դևը տիրանում է վատ մարդու **կապված հոգուն**՝ դեռին երդում տված, պղծորեն ապրող: Եվ նա, ում հրապուրել է չարը, և նա, ով դեկավարվել է ճշտով (Աշա), երկուսն էլ մտնում են **ուղին**՝ նախապատրաստված ժամանակով: Կամրջի մոտ, ստեղծված Մազդի կողմից, մաքուր Չինվադի մոտ, - ահա մի տեղ, որտեղ պարզում են, թե ում հոգին և ում խիղճը ինչպես է գործել աշխարհում, ով ինչ է արել՝ ապրելով կենդանի էակների միջավայրում»: Իսկ, ինչպես հայտնի է արդեն, Դև Վիզարշը դեպի այնտեղ և այնտեղից էլ՝ դժոխք «ուղի մտած» մեղավորի հոգին տանում էր միայն քարշ տալով և ծեծելով:⁴²

«Արտա Վիրապ նամակի» 38 գլխում Արտա Վիրապը դժոխքում տեսնում է մի մարդու հոգի, որն այնտեղ տառապում էր այն բանի համար, որ ուրիշի «դիակը շարունակ մենակ է քարշ տվել և աղտոտվել, և այդ զբաղմունքի ժամանակ չի լվացվել»: Նույն «Արտա Վիրապ նամակի» գլուխ 58-ում նկարագրված է դժոխքում տառապող, զրադաշտական սրբությունները անպատված մեկին, որին «**քարշ տվողները** քարշ էին տալիս դժոխք և շարունակ հարվածում էին»: Նույնի 68 գլխում Արտա Վիրապն ասում է. «Եվ ես տեսա (դժոխքի նախադռանը – Ս. Խ.) մի մարդու և մի կնոջ հոգիներ, որոնց շարունակ **քարշ էին տալիս**՝ մարդուն դեպի դրախտ, իսկ կնոջը՝ դեպի դժոխք...»⁴³:

Քարշելը որպես պատժատեսակ, խափանման, կանխման և նախականխման միջոց, որպես ազգային դելիկտային իրավունքի նորմ, Գր. Լուսավորչի «Հաճախապատում ճառքի» ու Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» միջոցով անցել է հայկական քրիստոնեական իրավունքին և օրենքին, կիրառվել հայկական քրիստոնեական պետության մեջ: Դրա ապացույցները հետևյալում են. Փալստոս Բուզանդի «Հայոց պատմություն» գրքի «Երրորդ դպրության» «ԺԳ» գլխում վկայվում է, որ երբ Հուսիկ եպիսկոպոսը Տիրան թագավորին ու նրա ուղեկիցներին արգելել է մուտք գործել եկեղեցի, ապա վերջինիս հրամանով նրան «...նեքս քարշէին զնա եկեղեցւոյն, բրածեծ եղել ջաղջախեալ քահնայապետն աստուծոյ սուրբ, երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոշկոճեալ ընկեցեալ լինէր»⁴⁴: Այսպիսով, թագավորի վեհությանը վիրավորելու համար, հատուկ կերպով նպատակ ունենալով ստորացնել Հուսիկ եպիսկոպոսին, նախ նրան քարշ են տվել եկեղեցու ներս, որից հետո միայն բրերով ծեծել են և ծեծելով սպանել:

Մ. Խորենացին վկայում է, որ ոմն Տրդատ Բագրատունի՝ վիրավորված լինե-

⁴² Տե՛ս Авеста в русских переводах (1861-1996)..., էջ 114, 169-170, 320, 357-358, 369.

⁴³ Տե՛ս «Արտա Վիրապ նամակ», նույն տեղը, էջ 77, 88, 93:

⁴⁴ Տե՛ս **Փալստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 52:

լով իր կին Երանյակից իրեն քամահրելու և արհամարհելու համար, ծեծի է ենթարկել նրան, կտրել նրա շեկ մազերը, փետտել նրա խոպոպիկները, որից հետո էլ հրամայել է «...**քարշել**, արտաքս ընկենուլ ի սենեկէն»: Այնուհետև, նույն Մ. Խորենացին վկայում է, որ Արշակ Երկրորդ թագավորի հրամանով Խադ եպիսկոպոսին «քարշ են տվել» և քարկոծել են՝ թագավորին քննադատելու և վեհությունը վիրավորելու համար: Սակայն քարշելու ժամանակ Ապահունի իշխաններից ոմանք, որոնք Խադ եպիսկոպոսի փեսաներն էին, միջամտել են: Նրանք «սուսերս հանեալ կիսախողխող **զքարշողսն** առնէին, և յափշտակեալ գխադ ի ձեռաց նոցա, և յիւրեանցն գնացին գաւառ»⁴⁵: Ապահունի իշխանների այս քայլը նշանակում է, որ նրանք, ինչպես նաև եպիսկոպոս Խադը, համաձայն չեն եղել այս պատժածիկ գոյությանը ընդհանրապես կամ էլ դրա կիրառմանը եկեղեցականի նկատմամբ: Խադը եղել է Ներսես կաթողիկոսի տեղապահը, որը այդ ժամանակ աքսորում էր: Եվ երևի նա՝ աքսորից վերադառնալուց հետո, այն վերացրել է: Դա խիստ հավանական կարծիք է: Ներսես կաթողիկոսը եղել է օրենսդիր, և քանի որ հայկական իրավական հուշարձաններում քարշելը այլևս չի հիշատակվում, հետևաբար դա նշանակում է, որ իսկապես այն եղել է վերացված և 5-րդ դարում չի կիրառվել: Իսկ դա ևս մասնակի ապացույց է այն բանի, որ Մ. Մաշտոցը «Հաճախապատում ճառքի» հեղինակը չէ:

Ավելացնենք նաև, որ Աստվածաշնչում մարդկանց քարշելու մասին որևէ հիշատակում չկա, հետևաբար այն զուտ զրադաշտական երևույթ է և հանդիպում է միայն զրադաշտական և հայկական քրիստոնեական իրավունքում: Հայկական հեթանոսությունն էլ, որի տակ թաքնված է մի ամբողջ քաղաքակրթություն, դրա իրավական, կրոնական, բարոյական, էթնոիկական (գեղագիտական) և այլ սիստեմներ՝ զրադաշտական է: Ջրադաշտությունը եղել է զուտ հայկական, որը՝ ուրացած լինելով հայ գրագետների կողմից, թողնված-նվիրված է այլ ազգերի: Այն հայերի բուն կրոնն ու իրավունքն է, նրանց ստեղծածը և ոչ թե ուրիշի կողմից ինչ-որ տեղից բերածը և հայերին պարտադրածը: Դա լրիվ հիմնավորված և հետևողականորեն ներկայացվելու է մեր հետագա աշխատություններում: Հայկական է եղել նաև այնպիսի էկզոտիկ դելիկտ, պատժատեսակ, քննության մեթոդ, խափանման, կանխման ու նախականխման միջոց, ինչպիսին է քարշելը:

ВОЛОЧЕНИЕ КАК СРЕДСТВО РАСКРЫТИЯ ПРЕСТУПЛЕНИЙ, КАК ПРОФИЛАКТИЧЕСКАЯ МЕРА И КАК ВИД НАКАЗАНИЯ

С. А. ХАЧАТРЯН

В статье "Волочение как средство раскрытия преступлений, как профилактическая мера и как вид наказания" раскрывается содержание и сущность этого феномена. Доказывается, что волочение как средство раскрытия преступлений, как профилактическая мера и как вид наказания, наряду со многими другими видами наказаний и мер, предусмотренных и применяемых в зороастрийской армянской правовой системе, было подвергнуто Григорием Просветителем реценции и внедрено в созданную им армянскую христианскую правовую систему.

⁴⁵ Տես՝ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 236 (238): 358 (359):

The content and essence of this phenomenon is revealed in the article. It is proved that dragging as means of revelation and prevention of crimes and sentence is Zoroastrian. It was provided and applied in the Armenian Zoroastrian Law System with a number of sentences and means of prevention of crimes. Gregory the Illuminator changed it and inserted in the Armenian Christian Law System which was created by him.

ԱՆՀՈՒՍՈՒԹԵԱՄԲ ԼԱՑՈՒԿՈՑ ԱՆԵԼՆ ՈՒ ՑՏԵԼԸ ՈՐՊԵՍ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Իրավագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս*

Անհուսութեամբ լացուկոժ անելն ու ցտելն արգելող նորմ է, որն իր արտահայտությունն է գտել «Հաճախապատում ճառքի» «ԺԲ» ճառի 38 տանը: Մինչ այժմ փորձ չի արվել քննության ու վերլուծության ենթարկելու այդ ճառերում արտահայտված այս կամ այլ նորմերը, պարզել դրանց ծագումնաբանությունը, նշանակությունն ու իմաստը: Նշավակման ենթակա են Մ. Աբեղյանի, Ա. Մկրտչյանի աշխատություններում և այլ աղբյուրներում առկա «Հաճախապատում ճառքի» «վերլուծության» փորձերը և արված հետևությունները, որոնց արդյունքում անհիմն կերպով այս ճառերը վերագրվել են Մեսրոպ Մաշտոցին¹: Ա. Առաքելյանն էլ, ով մի հսկայածավալ գիրք է նվիրել «հայ մտավոր մշակույթի զարգացմանը»՝ ուշադրության չի էլ արժանացրել Գր. Լուսավորչին ու այս ճառերին, որոնք հանդիսանում են այդ մշակույթի ամենակատարյալ դրսևորումներից մեկը²: Այս և այլ հետազոտողների կողմից չի արժևորվել ճառերի գրական, պատմական, աստվածաբանական, փիլիսոփայական և իրավաբանական-բարոյագիտական նշանակությունը, դրանց դերը տիեզերական եկեղեցու, հայկական քրիստոնեական պետության, նրա իրավական սիստեմի (համակարգի) և ամբողջ քրիստոնեական քաղաքակրթության կայացման գործում:

¹ Տե՛ս **Աբեղյան Մ.**, Հայոց հին գրականության պատմություն, վեց հատորից, Զ. 1, Երևան, ՀԱՍՈ ԳԱ իրատ., 1944, էջ 117-126: **Աշոտ Մկրտչյան**, Հինգերորդ դարի հայ դպրություն, Երևան, 1968, էջ 112-135; Видные деятели армянской культуры, Ереван, изд. Ергосунта, 1982, էջ 7-18:

² Տե՛ս **Առաքելյան Ա. Գ.**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն /1-ին դար մ.թ.ա. – 14-րդ դար/, Երևան, «Հայպետհրատ», 1959: